



Երևան, 29 Ապրիլ, 2013

ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈՉՔ

(Միասնաբար արտասանուած)

Իմասփութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմասփութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՍՈՍ 1

ԱՐԴԱՐՆԵՐՈՒԻՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Երանի անոր, որ ամբարիշտ մարդոց խորհուրդին չի հետեւիր,
մեղաւորներու ապրելակերպը չ'ընդօրինակեր
եւ զԱ.ստուած ծաղրողներուն հետ ընկերութիւն չ'ըներ,
այլ՝ հանոյք կ'առնեէ Տիրոց Օրէնքէն,

եւ անոր Օրէնքը կը սերտէ գիշեր ու ցերեկ:

Անիկա կը նմանի հոսող ջուրերու կողմին տնկուած ծառին,
որ նիշդ ժամանակին իր պտուղը կու տայ,
եւ որուն տերեւները չեն չորնար բնաւ.

անոր բոլոր գործերը յաջողութեամբ կը պսակուին:

Բնաւ այսակէս չեն ամբարիշտները.

այլ՝ կը նմանին յարդին, որ հովը կը տարտղնէ:

Ատոր համար ալ ամբարիշտները Աստուծոյ դատաստանէն պիտի չազատին.
մեղաւորները արդարներու կարգին պիտի չդասուին.

որովհետեւ Տէրը կը նանչնայ արդարներուն նամբան,

մինչ ամբարիշտներու նամբան զիրենն կորուստի պիտի տանի:

ՃԱՐԱԿԱՆ-ԱՊՈՉՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաւճիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց ալքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսոս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈՉՔ

Հայր Ամենակալ, Արարիս երկնի եւ երկրի,

Դուն որ ամէն ինչ մարդոց համար սփեղծեցիր,

եւ սակայն, մարդուն չարութեան ու անհնազանդութեան պատճառով

ջրհեղեղի ջուրով ամէն ինչ մաքրեցիր ու ոչնչացուցիր:

Բայց քու Հայրական սէրդ եւ հոգածութիւնդ ցուցաբերեցիր

Նոյին ու անոր ընդամիքին, զանոնք ազարելով կորուսպէ:

Արդ, մեզ ալ ազարէ զալիք յաւիպենական կորուսպէն

Զու Միածնիդ, մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի Խաչովը:

Եւ մենք միշտ պիտի փառաւորենք Զեզ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի,

այժմ եւ միշտ եւ յաւիպեանս, յաւիպենից: Ամէն:

ՕՐՈՒՅՆ ՆԻՒԹԸ
ԾՆՍԴՈՑ 6:9-22 և 7-8 ԳԼԽ

ՆՈՅ ԱՐԴԱՐ ԷՌ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՔԱԼԵՅ (6:9-22)

Մարդկութեան չարութեան չափացումը պարագան դարձաւ որ Ասքուած որոշեր մարդը եւ ամբողջ սփեղծագործութիւնը բնաշնչէր: Ապականած աշխարհին մէջ, սակայն, Նոյին առաքինութիւնը, որ շնորհը պիտի գտնէր Ասքուծոյ մօս, որ երբէք չի նիրհեր ու չի բնանար: Ահաւասիկ, երեւոյթ մը, որ ցոյց կու փայ, թէ ինչպէս կարելի է նաեւ չիեպելի աշխարհի ապականութեան, այլ ազադ կաճրով ընպրել լաւը, բարին, գեղեցիկը՝ այլ խօսքով Ասքուծոյ ճամբան:

Ասքուած կը պաքուիրէ Նոյի որ փապան մը շինէ, որ պիտի խորհրդանշէ Քրիստոսի Խաչը եւ Եկեղեցին: Եւ ահա շուրով է որ Ասքուած պիտի մաքրէր մարդկութեան մեղքն ու ապականութիւնը: Այն շուրը, որ նաեւ խորհրդանշէ պիտի դառնար մկրտութեան շուրին, որուն մէջ շուացումով գեղի կ'ոնենայ մեղքերու լուացում:

ԶՐԿԵՂԵՂԸ (7:1-24)

Ահա պահը հասաւ, որ Նոյ փապան մփնէ, իր հետ նաեւ իր կինը, դդաքը, դդոց կիները, եւ մաքուր կենդանիներէն եօթական, արու եւ էզ, իսկ անմաքուր կենդանիներէն երկուքական հապ, արու եւ էզ: Եթէ երբէք փապանը կը խորհրդանշէ Եկեղեցին, ապա կը նշանակէ որ Եկեղեցոյ մէջ ալ կարելի է դրեսնել մաքուր եւ անմաքուր, արդար եւ ոչ արդար, որպէս ցորեն եւ որում: Միւս կողմէ, որքան ալ Ասքուած որոշեց որ մաքրագործէ եւ ոչնչանէ, բայց ահա ասով ցոյց կը գրուի, որ սփեղծագործութիւնը շարունակուի:

Ի գես այս երեւոյթին, ու փակաւին եօթ օրերու յեփաձգումով, Ասքուած ուզեց առիթ փալ ապականած մարդկութեան, բայց անոնք պիտի մնային անդրդուելի:

Ահա Ասքուած նաեւ կ'օգպագործէ բնութիւնը եւ բնութեան փարտերը, որպէսզի անով նաեւ իրագործէ իր ծրագիրը:

Զրիեղեղը 40 օր եւ 40 գիշեր: Ասքուած փակաւին իր հայրական սէրը եւ հոգածութիւնը կը ցուցաբերէ մարդկութեան նկապմամբ: Ան կրնար մէկ օրէն ամողջութեամբ բնաշնչել, բայց այդպէս ըրաւ, այլ 40 օր եւ 40 գիշեր, որպէսզի մի գուցէ շաբեր դրեսնեն, զղան ու դարձին գան եւ Տերն ալ փրկէ զիրենք:

Զուրերը ծածկեցին ամէն ինչ, որ կը խորհրդանշէ Ասքուծոյ Դարպապանը, որ միայն կարելի է անկէ փրկուիլ զղումով ու ապաշխարութեամբ: Միւս կողմէ, նոյն շուրերն են, որ բնաշնչում է անարդարին, իսկ օծում եւ լուացում է արդարին:

ԶՐԿԵՂԵՂԸ ԿԸ ԴԱՄՐԻ (8:1-19)

Ամբողջ շրիեղեղի դեսողութեան ընթացքին Ասքուծոյ հոգափարութիւնը հանդէպ Նոյին եւ փապանին, ու անոր մէջ եղողներուն:

Ասքուած յիշեց Նոյը: Վրապայայքութիւն մըն է, որ կը նշանակէ հասաւ ժամանակը ազադելու (Հմմի Ելից 2:24):

Ասքուած երկրի վրայ հով մը բերաւ: Այսպէս յշշուած հովը սովորական հով չէ, այլապէս այսօր ծովերն ու ովկիանոսները պիտի ցամքէին: Այլ կը նշանակէ, այսպէս նաեւ հով բացաբրութեան փակ կարելի է դրեսնել խորհրդանշական Սուրբ Հոգին ներկայութիւնը, որպէսզի խաղաղութիւն բերէ:

Նոյ ազուա մը կ'արձակէ եւ անոր հետ աղաւնի մը: Աղանին վերադարձաւ, բայց ազուաւ ոչ: Ազուաւ կը խորհրդանշէ այն քրիստոնեայն որ մկրտութենէ յեպոյ կը շեղի իր ընթացքէն: Իսկ աղաւնին կը խորհրդանշէ Սուրբ Հոգին, իսկ ձիթենին՝ անոր ձերն ու մշտադալար ըլլալը՝ խաղաղութիւն:

Ասքուած կը պաքուիրէ Նոյին որ փապանէն դուրս գան բոլորը, նաեւ կու փայ այն նոյն օրինութիւնն ու իրահանգը ինչ որ գուած էր Աղամին ածիլ ու շաբնալ:

ՆՈՅ ԶՈՀ ԿԸ ՄԱՏՈՒՅԱՆ (8:20-22)

Որպէս շնորհակալութիւն, Նոյ բոլորէն, ու բոլորի փոխարէն, մաքուր կենդանիներէն մէկական հապ առաւ եւ Ասքուծոյ գոհ մաքուցեց: Եւ Ասքուած անոյշ հովը հովութաց: Կը նշանակէ ընդունելի եղաւ Նոյի ընծան: Ժէպէտ փապանին մէջ մաքուր եւ անմաքուր կենդանիները միասին էին, բայց միայն մաքուրներն են որոնք պիտանի են Ասքուծոյ ընծայութելու: Միւս կողմէ, նաեւ կարեւոր է ընծայողին դիմումն ու ներաշխարհը, ինչպէս որ էր պարագան Կայէնին ու Արէին: